ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» հուլիսի 2026թ. N: 262-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ մասերի, 96-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 3273-Ա հրամանի 1-ին կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N ԴԽ/20.1/41798-2025 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ 2026 թվականի հուլիսի 13-ից 17-ը ներառյալ իրականացնել իրավական հսկողություն:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական հսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը և իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Իրավական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020

թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանով հաստատված՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարով:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական հսկողության իրականացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմել արձանագրություն, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2026 թվականի հուլիսի 7 -ի N262 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԳՐԿՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հ/հ	Համայնքի անվանումը	Իրավական հսկողության կատարման ժամկետը	Իրավական հսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը	Իրավական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք	
				Զբաղեցրած պաշտոնը (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անունը, ազգանունը
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ, խմբի ղեկավար	Արամ Անտոնյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական, խմբի անդամ	Գրիգոր Ավետիսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Սարգիս Խաչատրյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Վաղինակ Հովհաննիսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Անդրանիկ Նալբանդյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Տիգրան Անանիկյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Հրանտ Թորոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերով վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Աննա Գյունաշյան

1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք	2026 թվականի հուլիսի 13-ից 17-ը ներառյալ	2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Դավիթ Նազարեթյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի մասնագետ, խմբի անդամ	Օֆելյա Մխիթարյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ	Շիրակ Երանոսյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ	Կարինե Սերոբյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Նարինե Ղազարյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Աղավնի Հարությունյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ, խմբի անդամ	Հովհաննես Գաբրիելյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Զարիկ Մուրադյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Արամ Իսահակյան
				Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ	Վահան Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է